

մատնուած ըլլան հին եւ նոր ժամանակներուն մէջ: Այդ հեղձուցիչ մթնոլորտին մէջ է որ գրագէտը իր ներշնչումներն ապրած ու արտայայտած է:

Որքան հեշտ պիտի ըլլար այս գործին վերլուծումը, եթէ անիկա ընդգրկէր գրական որոշ ու միակ սեռ մը. վիպական, բանաստեղծական կամ նկարագրական: Բայց Ջարդարեան յայտնապէս միակ սեռի մը մշակման չի կապեր իր տաղանդը. ապացոյց *Յայգալոյսը* որ կարծես հանդիսարան մը կամ հաւաքածոյ մըն է՝ զանազան տարասեռ հեղինակներէ քաղուած հատուածներու: Պակաս բան կա՞ հոն. վիպակը, հէքեայթը, հովուերգութիւնը, պատկերը, նկարագրութիւնը, տպաւորութիւնը, մինչեւ իսկ ոտանաւոր մը՝ տեսակին ամբողջութեանը համար անշուշտ. եւ այս բոլորը խառնիխառն, ըստ հաճոյս զետեղուած. տեսակներու կարգին այս խառնակութիւնը անտարակոյս անոր համար որ *Յայգալոյսը* դասագիրք մը չէ. այդու, ուրեմն, աւելի հրապուրիչ եւ աւելի շահեկան թերեւս:

⁸Գաւառացի հայ կնոջ ասանդական առաքինութիւնը տարփողող այս վիպակին անմիջապէս քովը կարելի դնել *Սեւ հաւը կանչեց* վիպակը, որուն մէջ ներկայացուած է գաւառացի հայ կնոջ ուրիշ տիպար մը որ միւսին հերքումն է: Մինչ իր ամուսինը Պոլսոյ մէջ կը տուայտի տաժանքոտ ու քայքայող աշխատութեան մը մէջ՝ իր օճախին տերտովը ճենճերելով, անդին կինը կը շնայ իր տագրոջը հետ որ գիւղին անագորոյն Խօջապաշին է: Մեծ գայթակղութիւն գիւղին մէջ: Պառու կեսուրը, դողով սարսափով լի, կ'զգուշացնէ իր հարսը. բան մը օգուտ չունի սակայն: Մայրը ետ կկանչէ իր պանդուխտ գաւակը որ կը դառնայ իր հայրենի օճախը՝ զոր ահաւոր պղծութիւն մը մթագնած էր: Հէք ամուսինը կնոջմէն իսկ կ'իմանայ քստմանելի եղելութիւնը. կը վանէ իր շնացող կինը. եղբայրը, Խօջապաշին, անձնասպան կ'ըլլայ. պառու մայրը կը մեռնի սրտին ցաւէն. խաբուած ամուսինը գլուխը կ'առնէ կ'երթայ օտարութեան մէջ կորսուելու. կինը ալ հանրակին